Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ - 2024
8–րդ դասարան - 120 րոպե

N 1-4
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 x 4 = 2 միավոր)

1. Որտե՞ղ են առաջացել քրիստոնեական առաջին համայնքները. *(0,5 միավոր)*
1) Փոքր Ասիայում
2) Պաղեստինում
3) Եգիպտոսում
4) Անտիոքում

2. Ո՞վ է Ս. Սարգիս զորավարի աճյունից մասունք Հայաստան տեղափոխել.*(0,5 միավոր)*
1) Ս. Մեսրոպ Մաշտոցը
2) Ս. Հովսեփ Հողոցմեցին
3) Ս. Ղևոնդ երեցը
4) Ս. Սահակ Պարթևը

3. Ո՞ր կաթողիկոսի օրոք է կառուցվել Նարեկավանքը. *(0,5 միավոր)*
1) Խաչիկ Ա. Արշարունու
2) Սարգիս Ա. Սևանցու
3) Անանիա Ա. Մոկացու
4) Պետրոս Ա. Գետադարձի

4. **Բարսեղ Ա. Անեցին Անին թողնելուց հետո որտե՞ղ է հաստատվում.** *(0,5 միավոր)*
1) Հնձուց վանքում
2) Հռոմոսի վանքում
3) Շուղրի Կարմիր վանքում
4) Նարեկավանքում

N 5-9
Կառուցված պատասխանով առաջադրանքներ
(1 x 5 = 5 միավոր)

5. Գեղարդը, ըստ ավանդության, Հայաստան բերվեց և մինչև մոնղոլական արշավանքները պահվում էր _____: *(1 միավոր)*

6. Խաչիկ Ա.-ն նորոգում է Արգինայի կաթողիկոսարանը: Նրա օրոք ծաղկում է Արգինայի _____: *(1 միավոր)*

7. Հայ Եկեղեցին Ս. Գրիգոր Լուսավորչին դասել է ավագ սրբերի կարգը, նրա հիշատակին նվիրել մի շարք տոներ: Նրան հայտնի ներբող է ձոնել Ընդհանրական Եկեղեցու հայրերից _____: *(1 միավոր)*

8. Շուտով վանքը [Սև լեռ] փլվեց երկրաշարժի պատճառով, և երանելի վարդապետն իր աշակերտների հետ _____ ձոր կոչված վայրում հիմնեց Նոր Գետիկի վանքը: *(1 միավոր)*

9. Պավլիկյանները չէին ընդունում, որ Քրիստոս ծնվել է Մարիամ Աստվածածնից, այսինքն՝ ժխտում էին նրա _____ _____ *(1 միավոր)*

N 10-11

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 4-5 փաստից

(1 x 2= 2 միավոր)

10. Կատարել համապատասխանեցում. *(1 միավոր)*

1. Հռոմկլայի համահայկական եկեղեցական ժողովը	ա. 1203 թ.	**1**	
2. Գրիգոր Գ. –ի ընտրությունը	բ. 1198 թ.	**2**	
3. Պահլավունիների տոհմի կաթողիկոսական իշխանության ավարտը	գ. 1113 թ.	**3**	
4. Լևոն Բ.-ի թագադրումն ու օծումը թագավոր	դ. 1204 թ.	**4**	
	ե. 1178 թ.		

11. Համապատասխանեցնել գահակալման տարեթիվը. *(1 միավոր)*

1. Ներսես Բ. կաթողիկոս	ա. 574-604 թթ.	**1**	
2. Ս. Հովհաննես Ա. Մանդակունի	բ. 461-478 թթ.	**2**	
3. Բաբկեն Ա. կաթողիկոս	գ. 548-557 թթ.	**3**	
4. Մովսես Բ. Եղիվարդեցի	դ. 549-556 թթ.	**4**	
5. Ս. Գյուտ Ա. Արահեզացի	ե. 490-516 թթ.	**5**	
	զ. 478-490 թթ.		

N 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով

(1 x 4= 4 միավոր)

12. Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին. ***(2 միավոր)***

«Նրա իմաստության համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ. Թեորա անունով մի կոստանդնուպոլսեցի իմաստասեր լսելով սրա հռչակը՝ իր գրքերը բառնալով գրաստների վրա, եկավ փորձելու և վերահասու լինելու նրա իմաստությանը: Եկավ, շատ օրեր զրուցեց նրա հետ ու գտավ ամեն բանի մեջ հմուտ, նաև Սուրբ Հոգով լցված: Եվ երբ գնաց Կոստանդնուպոլիս քաղաքը, հարցրին նրան, թե «ինչպե՞ս էր լուրը, ճի՞շտ էր, թե՞ ոչ»: Նա ասում է. «Ինչպես լսեցինք, այնպես էլ տեսանք. քանի որ նոր ոմն Գրիգորիս Աստվածաբան է հարություն առել»: Եվ ամենքին զարմացնում էր նրանով»:

1. Ո՞ւմ մասին է խոսքը: *(1 միավոր)*

_____

2. Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

13. Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին. ***(2 միավոր)***

«Միհրանյան տոհմի փառքը գագաթնակետին հասցնողը քրիստոնեություն ընդունած ..... իշխանի երկրորդ որդին էր՝ Ջվանշիրը»:

1. Ո՞ր իշխանի մասին է խոսքը: *(1 միավոր)*

_____

2. Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը: *(1 միավոր)*

_____

N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանքներ:

N 14

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է ավելորդը: *(0,5 միավոր)*

Սուրահ, Սուննա, Մեքքա, Հռոմ, Կաաբա:

_____

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կազմման սկզբունքին: *(0,5 միավոր)*

Երևանի Ս. Սարգիս եկեղեցի, Գյումրիի Յոթվերք Ս. Աստվածածին եկեղեցի, Աշտարակի Կարմրավոր կամ Ս. Աստվածածին եկեղեցի, Արթիկի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Կեչառիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի:

_____

N 15

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(1 միավոր)*

ա. Ուխտանես պատմիչ, Հովհաննես-Սմբատ, Խաչիկ Բ. Անեցի
բ. Ս. Գրիգոր Նարեկացի, Գագիկ Ա. Բագրատունի, Վարդան Արևելցի
գ. Անանիա Նարեկացի, Ուխտանես պատմիչ, Ս. Գրիգոր Նարեկացի

_____

_____

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(1 միավոր)*

ա. Մաղաքիա Օրմանյան, Շապուհ II, Կորյուն
բ. Մովսես Խորենացի, Հովհաննես Ե. Դրասխանակերտցի, Լեո
գ. Զաքարիա Ա., Եզնիկ Կողբացի, Արշակ II

_____

_____

N 16

1. **Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ:** *(2 x 0.5 = 1 միավոր)*

1) 1041 թ. մեկը մյուսի ետևից մահանում են Հայոց թագավորներ Աշոտ IV-ն ու Հովհաննես-Սմբատը:
2) 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո, ազատվելով սասանյան գերիշխանությունից, մի քանի հայ իշխանական տներ փորձում էին ստեղծել քաղաքական նոր կենտրոններ:
3) 1081 թ. Գրիգոր Վկայասերի քրոջ որդին՝ Բարսեղն օծվում է Վկայասերին աթոռակից կաթողիկոս:
4) Գագիկ Կարսեցին 1086 թ. Ծամնդավում ժողով է գումարում:
5) 1043 թ. մեկը մյուսի ետևից մահանում են Հայոց թագավորներ Աշոտ IV-ն ու ու Հովհաննես-Սմբատը:

2. **Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ:** *(2 x 0.5 = 1 միավոր)*

1) Ս. Հովհան Օձնեցին պավլիկյանների դեմ հանդես է գալիս աստվածաբանական ճառով:
2) Արաբական տիրապետությունը ծանր հարված հասցրեց Պարսկաստանի զարգացմանը:
3) Վրաց Եկեղեցու առանձնանալու գործում իր բացասական դերն ունեցավ նաև Բյուզանդական Եկեղեցու կողմից բարձրացված ինն աստիճանների խնդիրը:
4) Դվինի երկրորդ ժողովի որոշումներով հայությունը վերջնականապես հաստատում էր իր ազգային-եկեղեցական ինքնորոշումը:
5) Պավլիկյանների աղանդն ընդունում էր Հին Կտակարանը, սակայն ժխտում էր եկեղեցական աստիճաններն ու կոչումները:

N 17
Շարադրանք
(4 x 0,5 = 2 միավոր)

1. Ներկայացրեք Սարգիս Ա. Սևանցու աթոռակալության շրջանը: *(0,5 միավոր)*
2. Բացատրեք Հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները, Հռոմկլայի ժողովը: *(0,5 միավոր)*
3. Շարադրեք Սերմնացանի առակը և Հիսուսի մեկնությունը: *(0,5 միավոր)*
4. Պատմեք Վարագա Ս. Խաչի տոնի մասին: *(0,5 միավոր)*